ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

8 մայիսի 2015 թվականի **թիվ 17** քաղ. Մոսկվա

Ծառայությունների այն ոլորտների (ենթաոլորտների) ցանկում փոփոխություններ կատարելու մասին, որոնցում Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գործում է ծառայությունների միասնական շուկան

«Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի թիվ 3 հավելվածի 58-րդ կետի իրագործման նպատակով եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեղեկությունը հաշվի առնելով՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 110 որոշմամբ հաստատված՝ ծառայությունների այն ոլորտների (ենթաոլորտների) ցանկում, որոնցում Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գործում է ծառայությունների միասնական շուկա, կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) «օրվանից,» բառից հետո 1-ին տողատակի ծանոթագրության մեջ

ավելացնել «Հայաստանի Հանրապետության համար՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի թիվ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից,».

բ) 4–րդ տողատակի ծանոթագրության մեջ՝

առաջին պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերությամբ՝

«Հայաստանի Հանրապետության համար՝ զենքի եւ սպառազինության համակարգերի, ռազմական հանդերձանքի եւ ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթեցման աշխատանքների սարքավորումների եւ սարքերի ու հրատեխնիկական արտադրատեսակների, թանկարժեք մետաղների ջարդոնի եւ թափոնների, թանկարժեք մետաղների ու քարերի, թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի, օրինականորեն վերահսկվող պրեկուրսորների, էթիլ սպիրտի, ալկոհոլային եւ սպիրտ պարունակող ապրանքների, ծխախոտային արտադրատեսակների եւ ծխախոտային արտադրանքի, նավթի եւ նավթամթերքի, գազի, էլեկտրաէներգիայի, դեղագործական, պարադեղագործական, բժշկական ապրանքների (բացառություն՝ մինչեւ 2016թ.), պետական չափագիտական հսկողության եւ վերահսկողության ոլորտում կիրառվող չափիչ սարքերի, միջուկային եւ ռադիոակտիվ նյութերի առեւտրով զբաղվելը». երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Բելառուսի Հանրապետության համար՝ զենքի եւ սպառազինության համակարգերի, ռազմական հանդերձանքի եւ ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթեցման աշխատանքների համար սարքավորումների եւ սարքերի ու հրատեխնիկական արտադրատեսակների, թանկարժեք մետաղների ջարդոնի եւ թափոնների, թանկարժեք մետաղների եւ քարերի, թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի, օրինականորեն վերահսկվող պրեկուրսորների, էթիլ սպիրտի, ալկոհոլային եւ սպիրտ պարունակող ապրանքների, ծխախոտային արտադրատեսակների եւ ծխախոտային արտադրանքի, նավթի եւ

նավթամթերքի, գազի, էլեկտրաէներգիայի, դեղագործական, պարադեղագործական, բժշկական ապրանքների (բացառություն՝ մինչեւ 2016թ.), պետական չափագիտական հսկողության եւ վերահսկողության ոլորտում կիրառվող չափիչ սարքերի, միջուկային եւ ռադիոակտիվ նյութերի առեւտրով զբաղվելը»:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**